ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/112

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով քաղաքացի Սիրանուշ Ոփյանի կողմից 12.11.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Քաղաքացի Սիրանուշ Ոփյանի կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Քաղաքացի Սիրանուշ Ոփյանը (այսուհետ՝ նաև բողոքաբեր) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 12.11.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՏԿՆ-ՀԲՄԱԾՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն): Նշված մրցութային հայտը Ընկերության համար պատրաստվել է իմ կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ չի համապատասխանում՝ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ ներկայացված բանկային երաշխիքի չափը պակաս է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսից:

Նույն արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է «Անբավարար», քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունա-պատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

Հրավերի 7 կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է նույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը:

Հրավերին կից ներկայացված պայմանագրի օրինակելի ձևի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օր, իսկ 2019թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 15 օր:

Պայմանագրին կից ծավալաթերթ-նախահաշիվ՝ հավելված 1-ով նախատեսվել են երկու առանձին ծավալաթերթեր՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների կատարում (Ընդհանուր), և առանձին՝ 2018թ.-ի ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ: Ընդ որում, հրավերով առանձին-առանձին նշվել են թե ընդնահուր աշխատանքների նախահաշվային գումարը՝ 10333075 ՀՀ դրամ, և թե 2018թ. կատարվելիք աշխատանքների գումարը՝ 9849760 ՀՀ դրամ: 2019թ. աշխատանքների համար առանձին ծավալաթերթ-նախահաշիվ չի նշել, հաշվի առնելով, որ այս մասով մրցույթը իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ֆինանսական միջոց նախատեսվելու դեպքում առանձին համաձայնագիր կնքելու հիման վրա:

«ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է գնային առաջարկ՝ 74,394,000 ՀՀդրամ: Ընդ որում, նշված գնային առաջարկում առանձին-առանձին հաշվարկվել են 2018թ. և 2019թ. իրականացվելիք աշխատանքների ծավալները՝

- 70,914,000 ՀՀ դրամ՝ 2018թ. ի մասով,
- 3,480,000 ՀՀ դրամ՝ 2019թ-ի մասով:

Ընկերությունը «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է բանկային երաշխիք՝ 3,546,000 ՀՀ դրամի չափով, այսինքն 2018թ. համար ներկայացված գնային առաջարկի 5% չափով, քանի որ ըստ Ընթացակարգի հրավերի՝ 2019թ. աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսված չէին, և 2019թ. նախատեսված գնման մասով կիրառվելու էր Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով

նախատեսված կարգը, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը կնքվելու էր պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում 2019թ. գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Իսկ ինչպես արդեն նշվել է, Կարգի 32-րդ կետի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում: Հենց ելնելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի իմպերատիվ պահանջներից, որը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կատարվող գնման դեպքում նախատեսում է բացառություն՝ հայտի ապահովում ներկայացնելու մասով, և հաշվի առնելով, որ Հրավերում հստակ նշվել է, որ 2019թ. աշխատանքները իրականացվելու են համապատասխան ֆինանսական միջոց նախատեսվելու դեպքում, ինչպես նաև նկատի ունենալով, որ առանձնացվել է 2018թ. իրականացվելիք աշխատանքների առանձին ծավալաթերթ-նախահաշիվ՝ Ընկերության կողմից բանկային երաշխիքը ներկայացվել է միայն 2018թ. իրականացվելիք աշխատանքների համար, որի համար ֆինանսական միջոցներ նախատեսված են:

Բողոքը քննելիս՝ խնդրում են նաև նկատի ունենալ, որ Հրավերի պահանջների համաձայն՝ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը ընդամենը 90 աշխատանքային օր է, իսկ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կատարվող գնման դեպքում հնարավոր է, որ ֆինանսական միջոցը նախատեսվի այն ժամանակահատվածում, երբ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը վաղուց անցած լինի, և նման պայմաններում 2019թ. համար նախատեսված գնումների դեպքում բանկային երաշխիքը կդառնա անիմաստ, չաշխատող փաստաթուղթ: Բացի այդ, Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կատարվող գնման դեպքում բանկային երաշխիք ներկայացնելը ավելորդ ֆինանսական ծանրաբեռնվածություն է առաջացնում Ընկերության համար այն պայմաններում, երբ նման ֆինանսական միջոցը կարող է ընդհանրապես չնախատեսվել, իսկ մասնակիցը ստիպված կլինի կատարել վճարումներ՝ բանկային երաշխիքի սպասարկման համար: Հենց նաև այս տեսանկյունից կարծում ենք, Կարգում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կատարվող գնման դեպքում հայտի ապահովում ներկայացնելու մասով արվել է բացառություն:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի իմպերատիվ պահանջներից ելնելով՝ 2019թ. կատարվելիք աշխատանքների մասով «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հայտի ապահովում:

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է, քանի որ ներկայացված բանկային երաշխիքի չափը պակաս է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսից:

Գտնում ենք, որ նման որոշում կայացնելիս՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ դադարեցնել «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.10.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի արձանագրության 2-րդ և 3-րդ կետերով կայացրած՝ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները:»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին բողոքը բերող անձը՝ քաղաքացի Սիրանուշ Ոփյանը, և վերջինիս լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը, Արթուր Պարանյանը և Վարդան Հայրապետյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) քաղաքացի Սիրանուշ Ոփյանի կողմից 12.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 19.11.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2018 թվականի նոյեմբերի 14-ի գրությամբ ներկայացված բողոքի, գտնում ենք, որ ՀՀ քաղաքացի Սիրանուշ Ոփյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ /այսուհետ նաև՝ Մրցույթ/:

Մրցույթին մասնակցելու նպատակով 26.10.2018թ. հայտ է ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընկերությունը Մրցույթի թիվ 4 հավելվածով նախատեսված գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել 74,397,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ընկերությունը հայտով ներկայացրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի /այսուհետ նաև՝ Բանկ/ կողմից 26.10.2018թ. տրված թիվ 01-1260 բանկային երաշխիքը /այսուհետնաև՝ Երաշխիք/:

Երաշխիքի 2-րդ կետի համաձայն՝ Բանկը անվերապահորեն պարտավորվում է նույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով վճարել 3,546,000 ՀՀ դրամ գումար՝ պահանջը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 32-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ ենթակետի համձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով հստակ սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է ներկայացվի բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի գնային առաջարկով ներկայացված՝ պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումարը կազմել է 74,397,000 (74 397 000 * 5% =3,719,580) ՀՀ դրամ, իսկ բանկային երաշխիքով նախատեսված գումարը 3,546,000 ՀՀ դրամ է, որը պակաս է հրավերով նախատեսված գումարի 5 տոկոսից:

Բողոքաբեր անձը բողոքով հայտնել է, որ Ընկերությունը գնային առաջարկը բաժանել է երկու մասի և բանկային երաշխիքը ներկայցրել է 2018թ. իրականացվելիք աշխատանքների համար, իսկ 2019թ. իրակացվելիք աշխատանքների համար՝ ոչ: Բողոքաբերը նաև նշել է, որ երաշխիքի վավերականության ժամկետը 90 աշխատանքային օր է, իսկ ֆինանսական միջոց չհատկացվելու դեպքում 2019թ. համար նախատեսված բանկային երաշխիքը կդառնա անիմաստ փաստաթուղթ:

Այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ Մրցույթի հրավերով չի նախատեսվել, որ մասնակիցը պետք է գնային առաջարկը ներկայացնի 2018թ. և 2019թ. համար, այլ հստակ սահմանվել է, որ պետք է ներկայացվի մեկ տողով՝ պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումարով:

«ՎահրադյանՇին» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված գնային առաջարկով հայտնել և հավաստել է, որ ուսումնասիրել է «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի համար առաջարկել է պայմանագիրը կատարել 74,397,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Այսինքն՝ այս պարագայում մասնակիցը հստակ գիտակցել է, որ իր կողմից ներկայացված բանկային երաշխիքի գումարը պետք է պակաս չլինի գնային առաջարկի հինգ տոկոսից, իսկ այս պարագայում բողոքաբերի այն պնդումը, որ երաշխիքը ներկայացվել է միայն 2018թ. իրականացվելիք աշխատանքների համար չի համապատասխանում իրականությանը և

ընդամենը այս գործողությամբ Ընկերությունը փորձ է կատարել իր կողմից թույլ տրված սխալը շրջանցել: Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ ֆինանսական միջոց չհատկացվելու դեպքում 2019թ. համար նախատեսված բանկային երաշխիքը կդառնա անիմաստ փաստաթուղթ, ապա այս պարագայում ցանկանում ենք նշել, որ Ընկերության կողմից բանկային երաշխիքը ներկայացվել է որպես հայտի ապահովման միջոց, իսկ 2019թ. ֆինանսական միջոցներ հատկացվելու պարագայում մասնակիցը պետք է ներկայացներ բանկային երաշխիք՝ պայմանագրի կատարման ապահովման համար, այլ ոչ հայտի:

Այսպիսով, բողոքաբերի այն պնդումները, որ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ն բանկային երաշխիքը ներկայացրել է 2018թ. իրականացվելիք աշխատանքների համար և տվյալ պարագայում նույն երաշխիքը պակաս չէ ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսից, անհիմն է, չպատճառաբանված և այս հիմքով բողոքներ կայացնելով բողոքաբերը միտում է հետապնդում արհեստականորեն հետաձգել Մրցույթի գործընթացը, քանի որ բողոքը ներկայացրել է ՀՀ քաղաքացի Սիրանուշ Ոփյանը, որը չի հանդիսանում մրցույթի մասնակից և ևս մեկ անգամ ապացուցում է վերոնշյալը:

Բացի այդ ցանկանում ենք նաև նշել, որ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, իսկ այս դեպքում Ընկերությունը չի դիմել և որևէ պարզաբանում չի պահանջել:

Բողոքաբերը նշել է, որ վերոնշյալի արդյունքում Մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետը և մասնակիցը պետք է հայտի ապահովում չներկայացներ: Սակայն, բողոքաբերը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, իսկ տվյալ պարագայում ներկայացված բողոքը առարկայազուրկ է, քանի որ նշված կետի խախտման պարագայում պետք է բողոք ներկայացվեր մինչև հայտերի բացումը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք ՀՀ քաղաքացի Սիրանուշ Ոփյանի կողմից 12.11.2018թ. ներկայացված բողոքը մերժել»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/112 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է քաղաքացի Սիրանուշ Ոփյանի կողմից 12.11.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից 12.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 19.11.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.10.2018թ. նիստի թիվ 2 և 09.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 26.10.2018թ. տրված թիվ 01-1260 բանկային երաշխիքը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի անբաժանելի մասը հանդիսացող Պայմանագրի նախագծի հավելված 1-ով նախատեսվել է ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատման 2018թ. և 2019թ. կատարման ենթակա աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվները: Ըստ օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետների՝ 2018թ. ծրագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների համար ժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օր հետո, իսկ 2019թ.-ի համար՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 15 օր հետո:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 26.10.2018թ. տրված թիվ 01-1260 բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք), որը, նույն երաշխիքի 1-ին կետի համաձայն՝ նշված երաշխիքը հանդիսանում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցար) կողմից հայտարարված «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին

«ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցության հայտից բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորությունների) կատարման ապահովում:

Նույն երաշխիքի 2-րդ կետի համաձայն՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն պարտավորվում է նույն երաշխիքով սահմանված կարգով Բենեֆիցարին վճարել 3,546,000 ՀՀ դրամ, իսկ 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 19.04.2018թ. ներառյալ:

Հանձնաժողովի 26.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

- 1-ին կետի համաձայն՝ «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 74,394,000 ՀՀ դրամ:

- 2-րդ կետի «բ» ենթակետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, քանի որ ներկայացված բանկային երաշխիքի չափը պակաս է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսից:

- 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար, քանի որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Բողոքաբերը հայտնեց, որ Ընկերությունը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պայմանագրին կից ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել են ասֆալտապատման աշխատանքների կատարման երկու առանձին ծավալաթերթեր՝ ընդհանուր, և առանձին՝ 2018թ.-ի ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, ընդ որում, հրավերով առանձին-առանձին նշվել են թե ընդնահուր աշխատանքների նախահաշվային գինը՝ և թե 2018թ. կատարվելիք աշխատանքների գինը, և նկատի ունենելով, որ 2019թ. աշխատանքների մասով մրցույթն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ֆինանսական միջոց նախատեսվելու դեպքում առանձին համաձայնագիր կնքելու հիման վրա, ինչպես նաև ելնելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջներից՝ 2019թ. կատարվելիք աշխատանքների մասով հայտի ապահովում չի ներկայացրել: Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետով կայացրած որոշմամբ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է, ներկայացված բանկային երաշխիքի չափը մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսից պակաս լինելու հիմնավորմամբ: Բողոքը

ներկայացրած անձի ներկայացուցչի կարծիքով նման որոշում ընդունելով՝ Հանձնաժողովը խախտել է Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով նախատեսված պահանջները:

Բողոքաբերի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց նաև, որ մինչև բանկային երաշխիք ներկայացնելը քաղաքացի Սիրանուշ Ոփյանը հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատել Ընթացակարգի քարտուղարի հետ, քննարկել բանկային երաշխիքով նախատեսված գումարի վերաբերյալ հարցը և վերջինիս կողմից ստացել պարզաբանումներ, որոնցով էլ առաջնորդվել է Երաշխիքը ներկայացնելիս: Բողոքաբերի ներկայացուցիչը նշեց նաև, որ իր տրամադրության տակ է գտնվում վերոհիշյալ հեռախոսային խոսակցության ձայնագրությունը:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց, որ նման պարագայում անընդունելի է «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պատճառաբանությունը, քանի որ Ընթացակարգի հրավերով նախատեսված չէ, որ մասնակիցը գնային առաջարկը պետք է ներկայացնի 2018թ. և 2019թ. համար, այլ հստակ սահմանված է, որ այն պետք է ներկայացվի մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով: Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ Հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու՝ Օրենքով նախատեսված ժամանակահատվածում, բողոքաբերի կամ Ընկերության կողմից որևէ պաշտոնական հարցում Հանձնաժողովին չի ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

-2-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

-29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը

տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

-32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

- 34-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

- 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հրավերի 1-ին մասի՝

- 5.3 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

-7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է նույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

-7.3 կետի համաձայն՝ Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ նույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ նույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ նույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանվել է, որ, եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով.

- «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 74,394,000 ՀՀ դրամ, իսկ վերջինիս բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման չափը կազմել է 3,546,000 ՀՀ դրամ, ինչը պակաս է գնային առաջարկի 5 տոկոսից:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ն «ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/21Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում 3,546,000 ՀՀ դրամի չափով բանկային երաշխիք ներկայացնելով՝ խախտել է Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետով և Հրավերի 7.1 կետով սահմանված պահանջները, հետևաբար Հանձնաժողովը՝

«ՎահրադյանՇին» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելով և մերժելով, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Սիրանուշ Ոփյանի կողմից 12.11.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ